Ասպա վասն հաստատութեան սոյն օգտակար կանոնաց, մեք Պատրիարքս, իշխանապետքս և իշխանքս, վասն հաստատութեան Ս. ցանկալի Աթոռոյն երուսաղէմի, եւ գործակալութեան միաբան եղբարց եւ մանաւանդ հանգըստութեան Ս. Պատրիարքի, համակամ գրեալ զայս կանոնական գիրս յատուկ կնքով մերով կնքեցաք, և տուեալ ՚ի ձեռս հարազատ և հաւատարիմ (1) ..... ահա առաքեցաք ՚ի գլխոյ մերոյ խօսիլ և զմիաս մեր այսու գրովս հանդերձ յառաջացուցանել և հաստատել, և որպէս զայս գիր ՚ի մէնջ, նոյնպէս և այդր աներկբայ հաստատութեան կանոնական բանիցս՝ Ս. Պատրիարքն, եպիսկոպոսունք եւ միաբան եղբարք ՚ի միասին, զմի հաստատ հանրագիր կնքով ձերով առնուլ ՚ի նոցանէ և աստ առ մեզ առաքել. յետ որոյ և մեք զոր ինչ պատշաճն է այնպէս հոգացուք անօրինմամբն Աստուծոյ. ուստի վասն հաստատութեան բանիցս, եւ չքեղութեան ցանկալի Ս. Աթոռոյդ գրեցաք և կնքեցաք զայս կանոնագրեալ գիրս հանդերձ Պատրիարգօք, իշխանապետօք և իշխանօք: Եւ ընդ կանոնական բանիցս այսոցիկ, գրեցին նաեւ գիր յորդորանաց առ Ցովակիմ Պատրիարք եւ առ համօրէն միաբանս Աթոռոյն, տքնիլ և աշխատիլ արթնութեամբ վասն հաստատութեան Աթոռոյն, որպէս պահեցին զայն նախնի Հայրապետք եւ միաբանք, կալ մնալ միաբան սիրով եւ խաղաղութեամբ ընդ միմեանս. ունիլ ժողովականս Պատրիարքին յուշիմ ձերունի և ՚ի փորձառու արանց, որք տեղեակք են հանգամանաց Աթոռոյն և հմուտ անցիցն անցելոց, որպէս յաւուրս Գրիգորի և Թէոդորոսի, նոյնպէս և խորհրդականաց միաբան սիրով և հաւատարիմ վաստակիլ ՚ի գործ վանաց, հեռացեալ չինքնակամ հաճութենէ, յեսականութենէ, և ՚ի կուսակցութենէն, յուրախութիւն ազգին և ՚ի պայծառութիւն Աթոռոյն: Եւ ՚ի կատարել նոցա զինդիրս, ինքեանք եւս խոստանային յամենայնի ձեռնտու և օգնական լինել գործոց Աթոռոյն. զայս գիր եւս ձեռնարկեալ կընքեցին անձինք իւր 14, և առաքեցին ընդ կանոնական բա-

---

(1) Յովհաննիսի ստուգ: